



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

6 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 139-Ա  
ք. Երևան

**«ԷՖ ՆԵԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՏՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՏՐԱԳՐԵՐԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԹԻՎ 195 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի, 61-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 4-րդ մասի, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասի և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 4-ի «Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» թիվ 51-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերության հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու մասին 2019 թվականի նոյեմբերի 20-ի և հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման թիվ 195 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին 2019 թվականի դեկտեմբերի 4-ի դիմումները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

Բավարարել «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերության դիմումները՝

1. տրամադրել «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերությանը Երևան քաղաքի և Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի մարզերի տարածքում հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա.

2. 2019 թվականի դեկտեմբերի 11-ից ուժը կորցրած ճանաչել հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման թիվ 195 լիցենզիան:

3. Սահմանել պարտադիր հեռարձակման ենթակա հեռուստառադիոյի ցանկը՝ համաձայն Հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո, բացառությամբ 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2019 թվականի դեկտեմբերի 11-ին:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**Վ. ՕՀԱՆՅԱՆ**

2019թ. դեկտեմբերի 6  
ք. Երևան

1. «Հանրային հեռուստաընկերության առաջին ավիք»  
(«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ)
2. «Շողակաթ»  
(«ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ):